

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

05.06.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Ադրյանը, Վ.Դոխոյանը, Ս.Խեչումյանը, Ա.Բաղդասարյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Ա.Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Տ.Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա.Սարգսյանը - մարզպետի օգնական

Օրակարգում՝

1. ա) ՀՀ Ազգային Ժողովի հանձնաժողովների հետ համագործակցության մասին
բ) «Մաքուր-Հայաստան» ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների և հետագա միջոցառումների մասին
գ) ՀՀ Կառավարության արտագնա նիստ Լոռու մարզում
/Ա.Նալբանդյան/
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Ջեկ. Ն.Սարգսյան/
3. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Ջեկ. Հ.Պապոյան/
4. Հրատապ ծրագրերի մասին
/Ջեկ. Ա.Ջանազյան/
5. Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա միջոցառումների մասին
/Ջեկ. Ս.Խեչումյան/
5. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բաղդյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝
ա/ ՀՀ Կառավարության կողմից նախատեսվող արտագնա աշխատանքային խորհրդակցության անցկացման նախապատրաստության նպատակով ըստ ոլորտների վերհանել մարզում առկա խնդիրները, ֆինանսական վերլուծություններ կատարել և լուծման առաջարկությունների հետ հետագայում քննարկման

նպատակով ներկայացնել, հաշվի առնելով նաև մարզի հրատապ լուծում պահանջող խնդիրները, համայնքների խոշորացման գործընթացը և այլ առանձնահատկություններ:

բ/ Վերոգրյալ գործառույթները իրականացնելու նպատակով նաև միջոցներ ձեռնարկել և համագործակցել Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովների հետ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել «Մաքուր-Հայաստան» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների շարունակականությունն ապահովելու, աղբահանության ոլորտում խախտումների բացահայտման, վարձավճարների օրինական գանձման, պայմանագրերի կնքման, ինչպես նաև տուգանքների նշանակման և պատասխանատվության միջոցների կիրառման գործընթացների նկատմամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների ապահովման ուղղությամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա. Խեչումյանին՝

Երեխաների իրավունքների պաշտպանության միջոցառումների հարցերով զբաղվել ամբողջ տարվա ընթացքում, որպեսզի դրանք կրեն մշտական և շարունակական բնույթ, անհրաժեշտ լուսաբանում ստանան և հնարավորինս ընդգրկեն շատ համայնքներ և միջազգային, հասարակական ու այլ կազմակերպություններ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին՝

Ներկայացված առաջարկությունների և քննարկումների հիման վրա 1-օրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն Վանաձոր համայնքի առավել հրատապ և առաջնահերթ վերանորոգման ենթակա ճանապարհների վերաբերյալ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ